

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Ներկայ 1897 տարեկանի Պոչկարիոյ համար տարեկան 10ֆր " " 1/2 " 5 " Արտասահմանի համար " 12 " " " 1/2 " 6 " Կանխիկ վճարելի	Նամակ դրամ եռայն խրկել հետեւեալ հասցեով ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԻՄՆՈՒՆԵՔ, ԼՐԱԳՐՈՅ ՎԱՐՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ) Редакция на вѣстникъ „Иравункъ“ ВАРНА (България).	Rédaction du journal „Iravounk“ VARNA (Bulgarie)	Խմբագրութեան ոչդրական գրութիւնք եւ չեն դրկուիր եւ յարմար դատ- ոշանքներն միայն կը հրատարակ- ուին ամբողջովին կամ մասամբ: Ծանուցմանց տողը 20 սանթիմ. երեքէն աւելի անգամներու համար 20 առ 100 զեղ կը լինի:
---	---	--	--

ՈՒՍՈՒԱ

Ե Ի

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Երբ վերջին ուսանողները պա-
տերազմը լմնցած էր, թուրք
բանակը չարաչար յաղթուած և
յաղթական Ռուսիա պարտեալ
Թուրքիոյ հետ կը պատրաստուէր
կնքել խաղաղութեան դաշնագիրը,
Ներսէս վարժապետեանի և իր
սակաւաթիւ խորհրդակիցներուն
հայրենասիրական ներշնչմանը
գրգեցին զիրենք դիմումներ ընել
ուսու բանակին ընդհանուր հրա-
մանատար Նիքօլա Մեծ-Դքսին և
խնդրել իրմէ որ յանուն մարգա-
սիրութեան և քրիստոնէութեան
կարգադրութիւն մը ընէ: Թուր-
քիոյ Հայերուն ի նպաստ:

Դիմումները եղան Կ. Պօլսոյ
կրթեմքի ուսանական գեղական զօ-
րավար իկնաթիէֆի միջոցաւ, որ
սիրայօժար խոստացաւ ազգուս-
պէս միջամտել Մեծ-Դքսին մօտ
Հայերու խնդրանքին ընդունելու
թիւն համար: Մեծ-Դքսը իր
կարգին յայտարարեց թէ ջանք
չպիտի խնայէր Զարին հաւանու-
թիւնը ստանալու և թուրքիոյ
Հայերուն համար որքան կարելի է
նպաստաւոր պայմաններ ներմու-
ծելու խաղաղութեան դաշնագրին
մէջ: Զարն ալ չուշացուց իր հա-
ւանութիւնը, այնպէս որ առաջին
գիմումէն գրեթէ շտապէ մը ետքը
զօրավար իկնաթիէֆ կրցաւ վերջ-
նական պատասխան մը առնելու
համար այնքան անձկալից ու ան-
համբեր արտով իրեն ներկայացող
Հայ եկեղեցականը դիմաւորել ու-
րախութեամբ գոչելով.

—Ահա ինչ ձեզ. գործը յաջողե-
ցաւ. կայսր հաւանութիւնը ստա-
ցանք և ձեր խնդիրը պիտի անցնի
կնքելի դաշնագրին մէջ: Ընդ-
փոյթ ծրագրով մը ձեր պահանջ-
ները և իդէալը ներկայացուցէք
Մեծ-Դքսին:

Հայկական դատը ստեղծուած էր
Ռուսիոյ շնորհիւ և իր ձեռքով. և
նա այդ րոպէին սկսեալ անվիճելի
իրաւունք մը ստացած ըլլալ կար-
ծեց Հայերուս մշտնջենական և

բախտագիտութեան վրայ: Այո՛,
Ռուսիա կարծեց թէ այն բացա-
յայտ և խորին համակրութիւնը,
զոր ինք մեզ ցոյց տուաւ դրա-
պէս՝ այնքան փութկոտութեամբ
նկատողութեան առնելով մեր աղա-
չանքը և 16րդ յօդուածը գետե-
ղելով Սան-Սթէֆանօի դաշնագրին
մէջ, մեզ համար բացարձակ երաշ-
խիք մը պիտի ըլլար թէ թրքա-
Հայաստանի փրկութեան աստղը
օր մը պիտի ծագէր հիւսիսէն:

Տարաբախտաբար Ռուսիա սխա-
լած էր:

Ս. Սթէֆանօի դաշնագրին կըն-
քումէն ետքը Կ. Պօլսոյ անգլիա-
կան դեսպանատունը և Բ. Դրան
թուրք և հայ դիւանագէտները
ձեռք ձեռքի տուած սկսաւ իրենց
բոլոր հնարագիտութիւնը թափել
գտնելու միջոց մը, որով կարե-
նային քանդել այն մեծ ազգեցու-
թիւնը և անշափ ժողովրդականու-
թիւնը զորս Ռուսիա բնականա-
բար պիտի վայելէր այնուհետեւ
հայ ազգին մէջ և որ չափազանց
հակառակ էր թուրքեանգլիական
շահերու:

Անգլիա կը պատրաստուէր Ս.
Սթէֆանօի դաշնագիրը պատռելու
և նոր դաշնագիր մը Ռուսիոյ ստո-
րագրել տալով, ի մէջ այլոց անոր
ձեռքէն խլելու հայկական դատը
պաշտպանելու իրաւունքը:

Սակայն իրիտանական խորա-
գէտ դիւանագիտութիւնը բաւա-
կան չտեսաւ լոկ օրինական ձեւա-
կերպութեանց, կամ դաշնագրի մը
զօրութեամբ միայն պաշտօնապէս
գալ մտնել Ռուսին և Հայուն մի-
ջեւ: Պէտք էր բարոյապէս ալ
սաստիկ հարուածներ տալ իրկու
տարբերուն միջեւ հաստատուելիք
նոր, սերտ յարաբերութեանց. մէկ
խօսքով, Ռուսիոյ մէջ Հայերուս
նկատմամբ և մեր մէջ Ռուսիոյ
նկատմամբ կեցած զգացումներու
և տրամադրութեանց յիշաւրջում
մը առաջ բերել համաձայն անգ-
լիական տեսակէտներուն:

Այս դիտումով ահա անգլիա-
կան դիւանագէտ իրեն խորհրդակից
ու գործակից ունենալով Դուռը՝
յաշնոյցաւ վերջապէս համոզել հո-
գելոյս Ներսէս Պատրիարքը թէ

Հայերը չեն կրնար այլեւս ուղղա-
կի Ռուսիայէն օգնութիւն ակնկա-
լել, որուն կնքած դաշնագիրը
միացեալ Եւրոպա պիտի խզէր,
այլ թէ պարտէին դիմել Եւրոպայի
և անկէ խնդրել որ զիրենք առնէ
իր պաշտպանութեան ներքեւ:

Խաղը յաջողած էր և հայկական
պատգամաւորութիւնը թուրք կա-
ռավարութեան հաւանութեամբ
ճամբայ ելաւ գէպի Պէրլին վե-
հագործին ներկայանալու հա-
մար:

Ու Ռուսիա տեսաւ թէ իրեն
համար ամենէն ձախող ժամանակ
մը, ուր Անգլիա տեղի հարուած
պիտի տար իրեն, Հային ալ յան-
կարծ իրենց գիրքը փոխելով կը
հետեւին իր ամենէն ուրեքիմ թըշ-
նամիին՝ իրենց ուժին ներսը չա-
փով գէթ բարոյապէս վնասյու-
ռուսական ազգեցութեան:

Ասոր հետեւանք ուրիշ բան
չէր կրնար ըլլալ, բայց եթէ
մեզ նկատմամբ ուսական նախ-
կին համակրութեան հակակրան-
քի փոխարէն զոր յետոյ աւելի
զօրացուցին մեր գիմումներն առ
Անգլիա, մեր յեղափոխական և
այլ գործիչներու հաստատուելիս ի
լնտոն և մեր յեղափոխական
թերթերու հակաուսու հրատարա-
կութիւնները:

Սակայն սխալի վրայ գործեցինք
և տուժեցինք: Ս' ժամանակը հա-
սած չէ՝ որ գոնէ այսուհետեւ
գիտնանք օգտուիլ այնքան ծանր,
ահարկու դասերէ:

ՈՒԹՍՆ ԱՄԵԱԿ

Յ. ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

Ամսոյս 17 ին լրացաւ 80 տա-
րին հայազգի հանճարաւոր նկա-
րիչ Յ. Այվազովսկու ծննդեան օ-
րից: Այդ առթիւ մայրաքաղա-
քի ուսու թերթերը յարգանքով
լի յօդուածներ են նուիրում՝ ալե-
զարդ գեղարուեստագէտին, որ
մի քանի տարի առաջ, այն է
1895 թուականին, ասոնց իւր
գեղարուեստական փառաւոր գոր-
ծունէութեան 60 ամակը: Հարկ

չկայ այստեղ երկար կանգ առնել
Յ. Այվազովսկու անձնաւորու-
թեան, նրա հանճարի և գրեթէ
մի դար իրա մէջ պարփակող
բեղմնաւոր գործունէութեան վը-
րայ, որովհետեւ Յ. Այվազովս-
կին իւր հանճարի և նրա արտա-
յայտիչ անման վրձինի շնորհիւ
այնպիսի հռչակ է ստացել ամ-
բողջ աշխարհում, որ չկայ մի
երկիր, ուր մի գրագէտ լինի և
լսած կամ կարգացած չլինի Յ.
Այվազովսկու անունը, կամ տե-
սած չլինի նրա ստեղծած ընու-
թիւնը, որ միջուկ է իսկական
բնութեան հետ, նոյն իսկ գերա-
զանցելով նրան, որովհետեւ ըս-
տեղծագործութիւն է հանճարի:

Ճշմարիտ է, Յ. Այվազովսկին
հայ է ծագմամբ և օրինակելի
հայ է իւր զգացումներով դէպի
իւր ազգն և հայրենիքը, սակայն
նա պատկանում է ամբողջ մարդ-
կութեան: Նրանով պարծենում է
գեղարուեստը, որ հայրենիք չու-
նի և որի ծննդեան աղբիւրը աս-
տուածային հուրն է, որ տրվում
է ընտրեալներին:

Բաւականանք միայն շատ
համառօտ կենսագրական տեղե-
կութիւններով: Յ. Այվազովսկին
զաւակ է Ղրիմի հայ ընտանիքի
որ հայ ազգին տուաւ այդ հան-
ճարը և մի այլ գրական և ման-
կավարժական նոյնպէս հանճարա-
ւոր գործիչ—այժմ հանգուցեալ
Գարրիէլ արքեպիսկոպոս Այվա-
զովսկի: Յ. Այվազովսկին ծնուել
է թէոդոսիայում և արդէն պա-
տանեկական հասակից զարմանալի
շնորհունակութիւն և կոշտ մե
արտայայտում նկարչութեան և
թէոդոսիայի քաղաքագլուխ կազ-
նաչէկովի օժանդակութեան շնոր-
հիւ կարողանում էր նկարչու-
թեամբ իւր ազգային ընտանիքի
պարէնը հայթայթել: Նոյն անձի
գործակցութեամբ նա մտաւ կալ-
սերական գեղարուեստի ճեմարանը
և այժմ այն Այվազովսկին է, ու-
րի միայն անունը բաւական է մեր
աչքի առաջ մի ամբողջ գեղա-
րուեստական աշխարհ բանալու:
Տասնեւեթ տարեկանից սկսած՝
զգալ իւր մէջ հանճարի մշտն,

տաճանները տարեկանից սկսած ապրել դուրս և բարձր ունայն և անմաքուր աշխարհից, վախճան և հինգ տարի շարունակ բնութեան, արեգակնային ճառագայթների, ծովի ալեաց յուզման և փշուռած ցրիւնների մէջ փրկուել ճշմարտութիւնը, հասկանալ ինչպիսիք լինումը, մեղեդին, ամպրոպը, — սա մի այլ կեանք է, կամ աւելի ճիշդն ասած, սա ինքն է կեանքը, որ շատ դժուար հասկանալի է կամ բոլորովին անհասկանալի է պրօֆանդական աշխարհին:

Յ. Այվազովսկու հանճարը թըռչում է կարմիր Ծովի ջրերի վրայ և մեզ ակնատես է կայացնում Աստուծոյ ոյժին որ պատառում է անսահման ծովը՝ ընտրեալ ժողովրդին ազատութեան ճանապարհ բանալու և ահա փարաւոնի վահանների հազարաւոր սրերի փայլը նսեմանում է այն բիւրաւոր ջրային պլանների առաջ, որոնք սղաճման գից աւելի շարացի փայլ են ստանում երկնքի լոյսից: Նրա վրձինն է կենդանացնում ջրհեղեղը, Ամերիկայի գիւտը, Սեփաւս տաճարի պաշտօնը և այլն և այլն: Այվազովսկու ստեղծագործութիւններն այնպէս, ինչպէս անվերջ է ինքը բնութիւնը և նրա հրաշալիքները:

Մեզ հասած ամենահաստատ տեղեկութիւններից գիտենք որ վերջին տարիներս հանճարաւոր նկարչի ոգեկան թուիչը տխուր է և սգալից ոչ երբէք իւր տարիների բազմութեան պատճառով, այլ նրա վրայ ցնցող անասելի ծաւալող տպաւորութիւն են արել այն սոսկալի լուրերը, որոնք երբեք տարի շարունակ դալիս են տաճարական Հայաստանից: Ալեգարդ հայ գեղարուեստագէտը այդ տարիների ընթացքում իւր վիշտն աշխատում էր մեղմացնել շարունակ դրամական օժանդակութիւններ հասցնելով տառապանքներին, իսկ այժմ ուղարկել է Նիցցայից Մոսկուայում ուսն լեզուով տպագրուող Եղիսայրական օգնութիւն վնասուշահ հայերին ժողովածուին 4 նկարներ, որոնք են 1. «Թուրքերը հայերին նաւ են նստեցնում», 2. «Թուրքերը հայերին նաւից լցնում են Մարմարա ծովը», 3. «Նոյի իշնելը Արարատից և 4. «Զովանում է»:

Ինչպէս հայ պատմութեան հայր Մ. Խորենացիին ալեգարդ օրում պատմութեան գրքերը ծաւալած իւր «Ողբն» էր գրում, նոյնպէս այսօր մեր ալեգարդ գեղարուեստագէտը, նոյն վշտով համակուած, իւր վրձինը իւր հայրենեաց թշուառութեան արտայայտիչ է դարձնել, որ գէթ դրանով մխրթարէ իւր և մեր ամենքիս ծանր վիշտը:

(Արձագանգ) Ս. Հախումեան

ՄԵՇՎԵՐԵԹԻ ԴԱՏՐ

— — —

Ինչպէս ծանուցինք մեր վերջին թիւին թուրքերէն մասին մէջ, Բարիկ հրատարակուող և երկտասարդ թուրքերու բերան Միշվերէր լրագրին դէմ բացուած դատը անցեալները աչդի ունեցաւ Բարիկի պատժական տոնին առկա:

Նկատելով գործին շահեկանութիւնը, աւելորդ չեն անշուշտ անոր մանրամասնութիւնները:

Դատարանին մէջ, ամբաստանեալներու աթուղին վրայ նստած են յիշեալ թերթին խմբագիրները Ահմէտ-Րիզա, Խալիլ-Կանէմ, և պատասխանատուն Պ. Հոյիոն: Ասոնք իրենց կարճ հարցաքննութեան մէջ կընդունին ցուցուած յարձակումներուն պատասխանատուութիւնը և կը յայտարարեն թէ իրենք համոզուած են որ իրենց իրաւունքի սահմանէն անդին անցած չեն:

Նախ կը լսուին երկու վկաներ, Պ. Պ. Բիւլե Բիյեաւ և Ալֆրէտ Պէրլ, գրագէտներ, որոնք թուրքիա ապրած են:

Պ. Ալֆրէտ Պէրլ կըսէ. «ամբաստանեալները չեն ճանաչար և իրենց մասին թուրքիոյ մէջ յոյժ դրուատալից տեղեկութիւններ առած եմ: Մտաւորական և գրական դասակարգեր ի թուրքիա, երիտասարդ թուրքերուն հետ են: Մնաց որ ասոնք յեղափոխականներ չեն, չափաւորներ են մանաւանդ: Վերջապէս իմ գիտցածս սա է որ քանիցս ուզած են կաշառել Ահմէտ-Րիզան, ու ինք զայրացմամբ մերժած է ամէն նուէր: Նոյն իսկ Եւրոպա ապաստանելէն ետքն ալ Զիա փաշա որ կասկածելի համբաւ մը կը վայելէ ի թուրքիա, պաշտօն ստացաւ Եւրոպա գալ համաձայնել երիտասարդ թուրքերուն հետ շաղկապուած»:

Այս վկայութիւններէն ետք կարդացուեցաւ Հանրի Ռոշֆորի մէկ հեռագիրը զոր Տօփիլէն ուղղած էր Ահմէտ-Րիզայի. «Զիւր հեռագիրը կը գտնեմ ի Տօփիլ, Քոպուրէ դարձիս: Կառախումբին չհասայ: Եթէ կարենայի վերկայութիւն տալ, պիտի յայտարարէի թէ պատերազմին սկիզբը երբ արդիւնքները չէին ընդհանարուեր, Զիա փաշա ինձի զրկուեցաւ Սուլթանին կողմէ: Զիա փաշա զիս հաւաստեց թէ Ապտիւլ Համիտի անձնական հարստութիւնը մէկ միլիառէն աւելի էր, թէ՛ կըցած էր բոլոր եւրոպական դիւանագիտութիւնը իրեն շահել: Թէ վերջէմ Բ. զխաւորապէս իբր վեց միլիոն ընդունած էր, թէ Պիլմարք, ընդհակառակը, մերժած էր իրեն առաջարկուած դրամը: Թէ ինք, Զիա փաշա, եկած էր համաձայնելու երիտասարդ թուրքիոյ պետերուն

հետ և այն Ֆրանսացի օրագրողներուն հետ որոնց հակառակութիւնը շատ կը մտատանջէր իր վեհապետը:

«Պահած եմ այն նամակը որով Ապտիւլ Համիտի պատուիրակը խախտանքաւոր կը խնդրէր ինչ ընդունել զինքը: տարակոյս չիկար որ Էնկրաւսիմանը կաշառել էր իւր դիտումը, և իւր արդէն բանակցած անձերուն անունները կուտար ապացուցանելու համար ինձի թէ բարձր ու լաւ ընկերութեան մը հետ պիտի գտնուէի:

«Ուստի կատարեալապէս իրաւունք ունիք պնդելու, ինչպէս ես ինքս պնդած եմ, թէ կաշառատուութեան ընդարձակ ձեռնարկ մը կալմակերպուած էր այն ամէն խիղճըրուն վրայ զորս օսմ: կառավարութիւնը կաշառելի կենթադրէր»:

Յետոյ կարդացուեցաւ բողոքագիրը որ օրինաց ամենաշափաւոր գործադրութիւնը կը պահանջէր ընդդէմ «Պատուաւոր ամբաստանեալներուն»:

Այս պահուն վրայ հասաւ Պ. Քլէմանսօ, որ ջերմ ծափահարութեանց մէջտեղ վկայութիւն տուաւ ինչպստ ամբաստանեալներուն:

Բուն լեզուով հաստատեց թէ հայկական ջարդերուն պատասխանատուութեան մասին եւրոպեան դիւանագիտութիւնը վերջնական ինչ համոզում գոյացուցած էր և հռչակեց Ահմէտ Րիզայի պատուաւոր և ուղղամիտ ընթացքը:

Կարգը եկաւ փաստաբաններուն որոնք միեւնոյն բնաբանով շատագոյնցին ամբաստանեալները:

Տասը վայրկեանի խորհրդակցութենէ ետք, դատարանը բերաւ դատավճիռ մը որով մեծարանք կընծայէ ամբաստանեալներուն բարձր պատուաւորութեանը, և կը յաւելու թէ «համաշխարհային զայրոյթն ու դժգոհութիւնը զոր յարուցին Հայաստանի կոտորածները՝ կը բաւեն արդարացընելու անոնց ընթացքը»:

Ամբաստանեալները միայն տաւալեց ֆրանք տուգանքի դատապարտուեցան: Ուկնդիրները, որոնց մէջ կը նշմարուէին բազմաթիւ հայեր, մոլեգնաբար ծափեցին այս վճիռը և աղաղակեցին. «Կեցցէ՛ Ֆրանսա . . . »

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

— — —

ՌՈՍՏՈՒՔԻ ԱՂԵՏԸ

Հետեւեալը կը գրեն մեզ Ռոստոքէն.

Հետեւեալ շարադէպ տղէտը պատահեց Ռոստոքում: Ուրբաթ (97 Յուլի 25/6 Օգոստոս) ցեղեկուայ 2 1/2 ժամին բռնկուեց քաղաքէն շուրջ 3/4 ժամ հեռի

փայտաշէն վառօդատունը, որը կառուցվել էր քաղաքի սպանդաւոր և կառանգինայի միջև գըտնուած հարթագետների վրայ՝ Դաւուր գետի մօտը: Այդ շէնքում աշխատում էին այդ օրը մօտաւորապէս 320 մարդ, որոնք կառավարութեան քսան տարուց ի վեր ունեցած կարողութիւնները քանդում էին՝ շոկել գնդակները վառօդից: Այս գործը կապալով վեր առեր է Բրաթիա իվանովի, թէ՛ ինչ պայմանների տակ՝ դա մնալ յայտնի չէ, և չը հեաաքըքը իսկ քանի որ այժմ այդ կապալի զոհերը սեւ հողի տակ ծածկուեցան:

Մեռնողների, հոգեվարքների և վիրաւորեալների մարմինները վառօդի լափող բոցերի տակ պառկած մնացին մինչև քաղքցիների օգնութեան հասնելը, զի չէնքի դուռը միշտ փակ պահելու լաւ սովորովը. . . . յարգել տալիս են եղիր, որով 320 հոգւոց 70 մարդ աղաւթած կան, իսկ մնացեալ 250-ն մեռած կորչած են, որոնք բուլգար և հայ էին: Հայերը ունեցան 40 մարդ զոհ, երկու երեք էլ վիրաւոր:

Ուրբաթ օրից սկսեալ մինչև կիրակի օրը հրկիզեալներու թաղման հանդէս կատարվեց, զի պարբերաբար մեռան յրանօթ դէմքերը հայ գերեզմանատանը փոխադրվեցան, իսկ անճանաչելի դարձածները բուլկարաց գերեզմանատանը ամփոփվեցան, իւրանց միւս աշխատակիցների հետ: Հրկիզւալները տարիքով էին, ընդհանրապէս. երիտասարդներ, ապա պատանիներ, դեռատիներ և չափահասներ: Իմանալու է ասոնց շուրջում կիներ և աղջիկներ, և արձակուրդի առթիւով անդրադալուց անասնոջներ:

Կան իսպառ կորսվածներ՝ դիւաններ իսկ աներեւութացած: շատերի հետ մենք էլ այն ենթադրութիւնն ունինք, թէ երես Դաւուրի ալեաց մէջ կուլ գնացին, զի երբ մի հուժկու ձեռք պատի տախտակներից մին պոկ կը բերէ ու կը փախչի, և որը իւր հետեւորդներն կուենայ, որոնք թեւեւ ալրող ու միկող բոցերը մարել փորձած են Դաւուրի ջրերի մէջ նետվելով: զի երբ փոքրիկ Ծափարարեան գտնվեցաւ բոլոր վրին մերկանդաւմ, նա յայտարարեց թէ՛ «շատեր զգեստնին պատուելով ջուրը կը նետվէին, ևս ալ անոնց հետեւեցայ»:

Այս առթիւ վերստին կրկնապատկվեց հայ գողթականների սուգը և լացը:

* * *

Աւստիկ անուաններն այն դժբախտ հայերուն որոնք մինչև ցարդ ճանչցուեցան իբրեւ զոհ սոսկալի աղէտին:

Կրօն թէլեան 50 տարեկան (Պոլսեցի), զաւակը Հրանդ Կրօնիկ:

Ի ՆՊԱՍՏ ԱՂՔԱՏԱԽՆԱՄԻ

Ճանախ խումբին կողմէ պիտի ներկայացուի ՏՕՆ ՍԵԶԱՐ ՏԸ ՊԱԶԱՆ կամ ՊԱԼԱՏԻ ՈՃԻՐԸ, Ի նպաստ տեղւոյս Աղբատախնամ Ընկերութեան:

u. 27

427

Զարիաւոր ամասկան :

Կ Օ Շ Ի Կ Ի Ն Ե Ր Կ

Ի Ի Ր Ա Ռ Ա Ի Ե Լ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ը

Խնայողությամբ ժամանակի. — Ներկը քսուելով մինալը մէկ կըլլայ, եւ առ առաւելն շարաթը մէկ անգամ չներկել կը բաւէ :

Խնայողութիւն դրամի. — Մէկ շիշ
նուսկիան ներկը տալի մը կը բաւէ
մէկ զոյգ կօշիկի, եւ խոշանակի ալ
պէտք չկայ:

Օգտակերք. — Կակուղ կը պահէ մորթիները եւ կաշիները, զանոնք աւելի զիմացկուն կընէ, եւ. Նուպիանով ներուած մորթիներէն եւ կաշիներէն ջուր չանցնելի: Նուպիան ներկը բարուրի անմընէ:

Փայլ. — Նուպիան ներկը ունի
սքանչելի փայլ մը, որուն չկրնար
մոտենալ անգամ ուրիշ որ եւ է ներկ :

Սաստիկ զգուշանալու է զանազան
անուաններով հնարուած ուրիշ ներկերէ
կամ վէրնիճներէ , որոնք մորթը այ-
նելէ ուրիշ բանի չեն ծառայեր եւ
որքէք նուազխանի փայլն ալ չեն կրնար
ոսայ :

Իրսերէն մեծ քանակութեամբ առ-
նել ուզողները պէտք է զիմէն առ Կ.
Նազմաճեան ի Վատնա, որ Նուպիան
սերկի միակ Տէրօզիդէն է բոլոր Պուլ-
լարիոյ համար:

Վառնայի մէջ գլխաւոր ծախող-
ներն են .

Տիարք Ս. Գաբրիէլեան՝ Մուսալլա,
Բիվարովիչ Օթէլ տը Ռիւսիին ներ-
քու, Մանու հաճի Լէֆթէյ ողլու Ձրդ
Ուշասղուքի զիմայը, Երկկոր Արտէ-
սիքո՝ Պայրք բաղար:

ԲՐԷՆԱ ՖԵՐՏԻՆՆԱՏ ՀԱՂԵՐԺԵ-
ՐԻՆԻՆ ԿԵՂԵՆ ՀԱՓԼԺԱ ՊՈԼՁԵՐԶԷ
ԿԵԼԺԻՅ ՕՐՄԱՍՆԵՐՏԱՆ ՄՈՒԼԱՅԸ, ԲՈՒ-
ՄԱՆԻԿ ԿԱՎԵԺՄԱԼԱՐԸ ՈւՂՈՒՆ ԿԵՆՈՒ-
ԷՐ ԽԱՂԱՐԱԳ, ԻՔԻ ԳՕՆՆՈՒ ՄԻԼ-
ԷԺԺԵՐԻՆ ՀԻԼՔՄԱՍԼԱՐՆԵՐՆ ԿՈՒ-
ԿԵՕՐԻԼՎԵԼԵՐԻ ԹՈՒՆԱ ՎԷ ՊԱԼՁԱՆ
ԱՐԱՍՆԵՐՏԱ ՎՈՒՂՈՒ ԿՈՒՂԱՆ ՄՈՒՀԱ-
ՐԵԿԵԼԵՐԷ ԺԱԳՄԻՍ ՕՐՆԱՆ ՄԻԼ-
ՆԱՍԵԿԱԺԸ ՄՈՍԺՄԱՆԵՍԻՆԻ ԳԱՎԻ-
ԼԵՂՄԻՐԺԻՅ ՄԻՐ :

— Տիւն խարիճիյէ նազըրը՝ թեւսալիանըն պօշալմասը իշիւն էլշիւնէրին թէքիֆաթընա հիւսն րիզա կէօսթէրտի վէ պու պապատէ էլշիւնը քէնտի հիւքիւմէթը մէնսու պէյէրինէ մալիւմաթ վէրտիյէր :

Բուս հլլիսի Ս. Նէլիտօֆ տիւն
եղլտըզաա Բլէնա Ֆէրտինանտա
պիր վիգիթա վէրտի :

Քրոնշդատ, 31 Յուլիս
 Թուս վէ Ալման իմպերաթօրաւ
 ըը տիւն էօյլէնտէն սոնրա պու
 րայա եէթիշտիլէր: Իքի իմպերա
 թօրաւր սուրէթը մուհիպպանէտէ
 տէֆաթլա եէքտիկէրինի տերալուշ
 իտէրէք վէտալաշտլար: Քէզա
 իմպերաթօրիշայար:

4 11 12 11 11

Կաթնտու կին մը, պայմանաւ որ
այդ կնոջ զաւակը արու ըլլայ. գոհա-
ցուցիչ ամսական պիտի տրուի, գիմնէ
Սասունն սրճարան Մննիկ աղային:

Թեան դէմ, հասարակութիւնը կաշկանդող, փռեցնող պայմանների դէմ:

—Է՛հ, բան չունես, ինչի՞ս է պէտք
նոր կեանքը՝ միթե՞ կարող եմ ուզա-
ծիս պէս ապրիլ, երբեք, հենց որ
կենդանութեան նշոյցն ունի, իսկոյն
լը լսեղիւն, կը ճղիւն եւ այս ան-
գամ աւելի սարսափելի կերպով:

«Ոչ, եղբայր, բաւական է, մանա-
ւանդ հիմա, երբ կաշուի վրայ փոր-
ձեցի ամեն բան: Մենք անպատրաստ
լինք եւ աւելի թոյլ, Գուցէ նոր սե-
նդին աջողութիւն... ինձ եւ ինձ նման-
ներին մնում է կա'մ միշտ հաբրեւ,
կամ անձնասպան լինել, ուրիշ ճար
կայ:

Այսպէս խօսելէն մենք մտանք քա-
ղաք, Գէնկէն մօտեցաւ զինետան,
հնձ բարի գլխեր մաղթեց և. առաջ
—այսու ամիսնայնիւ. այսօր լաւ մեռնելու
գլխէլ էր—սիւ սարսուռ անցաւ մարմնովս
և եւ քայլերս արագացարիւ:

Քիչերը հազիւ կարողացայ քնել:
Երազումս իրար հոսեից անձնասպան
էին լինում ինչ որ բարեկամներ ունէի,
Լերջը Քէշեկէին տեսայ որ շատ ուրախ
էր, զուարթ եւ մաքուր հագնւած:

Առաւօտեան երբ սեղանատուն մտայ
Թէ իմնլու, տան տիկինն հառաչելով
ստաց:

—Գիտե՞ք, պարոն, այս գիշեր Դէն-
լէն սառել է փողոցում, գինետան
պատի տակ... ՎԱՐԴՈ

Բրէնս հաղթելէրինն Սլոան,
պօլս աղիմէթի Սուլթանըն տէ-
փաթլէ տալէթի իլէ օլմըշ օլուպ,
Բրէնսին Պուքրէշէ կիթմէսինտէս
էվկլէ՛ Վանն օլընտլղը իւզրէ՛
լծէշէպպիւս իտէճէկի պապը լծէտ-
պիըլէրէ սիւլիւք իթմէմէսի ի-
չիւն Սուլթան նասահաթ օլլու
պապը իլթաբաթտա պուլունա-
ճագ ըմըշ : Քէզա սէօյլէնիւտիկի-
նէ կէօրէ, Բրէնս՝ Սուլթանըն
էվկլէքի վատլալաբընը բճու իթ-
տիրմէք շարթը իլէ պու զիարէ-
թի իթմիշ տիլ : Զանն օլընտլ-
ղընս կէօրէ եէնր միւսատէլէր
վէրիմէսի իշթիմայ տոր :

Յուլիս 31-ին, հայկեստէն եկ-
վել վե սօնրա Բրէնս վե Սուլթան
միւլադաթ տա պուլունտըլար, Սուլ-
թան Բրէնսէ զիգըլմէթ հաիյէ-
լէր՝ պրը եիւլիւք վե պիւ սաաթ
գորտունը վերտի։ Ս. Սիմոյսֆա
Սուրասա իֆլիխաւ, վե Օսմա-
նիէ պրիսնի Նշանլարը վերտի,
Ս. Սարքոֆա վե Ս. Եուվանս-
ֆա պրիսնի Սէնիաիյէ վե Ս.
Ժապըլէշթոֆա վե Ս. Չարոֆա
իքիննի Սէնիաիյէ Նշանլարը,
վե մայէթ մէմուրլարատա սայլը
Նշանլար իհսան պուրուլար։

ԶԱԽԻՐԷ ԲԻԱՑԱՍԸ

Հաջևիւ 2 Օգոստոս

Գրչդոմայ

Վաղօն, Խոզ
Արապա, լիպրա 57-61, հէք/ժող.
14,50-15 ֆրանք

Цркви

40-42 լիպրա, հէքթօլթ. 5,70-5,80
Նաբօլէոն 20,60 ֆռ. հիսապը իւէ
կիւնտէ հալընըզ 2-3 արապա
պուղտայ զէ 3-4 արապա տըրա
էնտիկի աէպէպլէ օլան մուսմէլէ
բէք էհէմիլիէթսիլ տիր, Քիաջա՝
գալի :

Եէնի մահադատան կիւնտէ 8-10
արապա պուղտայ վէ 5-6 արապա
արբա կէլմէկէ պաշլամըշ տըր :
պուղտայ լիպրասը՝ 47 տէն 53 ,
ֆիյալթ՝ 9-12 ֆրանգ . արբա
լիպրասը 38 տէն 41 , ֆիյալթ
4,80-5 :

U.27-

Ուսումնական խորհրդէն վկայ-
եալ դասախարակ-ուսուցիչ մը՝ որ
նաեւ եկեղեցական երաժշտութեան
լու հմտութիւն ունի, պաշտօն կը
մնտէ . դիմել իմացալթեան :

3 3